գատութեան շնայելով, և ըստ սրբազան պարտուց իւր աշխատելով, ինքնին Առաջնորդութեան նոր շաւիղ մը բացաւ Կարսի մէջ,

Ի վերջոյ չմոռնանք յիշել մասնաւորապէս նաև Նորին Գերապատուութեան Շիրակայ ժողովրդոց վերայ Գործակալ կարգած բարեշնորհ Տէր Գաւթեանց Տ. Սաղաթիէլ հօր աշխատութիւնն ալ, որն որ արդարև յայտնի ապացոյց մ'նէ իր պաշտօնի մէջ ունեցած հաւատարմութեան, ու իր Ս. Առաջնորդին ցուցուցած հնազանդութեան,

Գեր. Խմբագիր Տեարք, այս անգամ Խոշափանուցս նիւթական շինութեանց և բարեկարգութեանց մասին մասնաւոր տեղեկութիւններս հիւրընկալելով Արարատ մէջ 'ի լուր համազգի եղբարցս, կանխաւ շնորհակալութեանս ջերմ հաւատիքը ընդունած, և հետևաբար զմեր նուաստութիւնը քաջալերած կըլլաք նորա բարոյական տնօրէնութեանց և դպրոցի բացման ուրախութիւն լուրն ալ գրել, շնայելով գրչիս տկարութեան։

Ոչ-վ ՀԱՐ ԱՆՆՈՒԷՐ ՅԻՇ Ա ԷՐԷԼԷ ԱՂԷՏ

Ն. Մամբրէ Բղնունի Բաղիշեցի։

1870 ՀՈՒՆՎԱՐ 12

Ի ԿԱՐՍ ԼՈՍՍՈՐՅԷԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ։

ԲՈՂՈՔ Կ. ՊՕԼՍՈՅ ՕՐԱԳԻՐ ԼՐԱԳՐՈՅ ԴԷՄ։

Խմբագրութեան Երեսաց ամսագրոյ.

Նորումն Նոր—Նախիջևանցի ուխտաւորին մէկը Մշու սուրբ Կարապետի Վանքէն վերադառնալուն Պոլիս կ'հանդիպի, և հոն կ'մնայ մէկ քանի օր մը. և այս օրերս իւր հայրենիքը՝ այսինքն Նախիջևան հասնելուն պէս շուտով ինձ տեսութեան կուգայ և զարմանալով կ'պատմէ նոր լուր մի, որ ամենևին Նախիջևանի մէջ եղած ու լսուած չէ, լուրն այս է. Պոլսոյ Լրագիր հրատարակողին մէկը՝ յօդուած մի տպեր է, որուն մէջ կ'յայտնէ, "Արդէս թէ մեր Նոր—Նախիջևանի Եկեղեցեաց մէջ սովորութիւն մի մտած է, 'ի մէջ Ս. Պատարագին Կայսեր և Կայսերազանց գերդաստանի անունները Ռուսերէն յիշատակել, և այդ բանին իբր սկզբնաւորութիւնն ալ մեզնէ եղած կամ յառաջացած է"։ Սակայն իսկական տպագիր թերթը չունենալով՝ չ'կարողացանք իմանալ անոր բուն նպատակը՝ թէ՝ ի՞նչու համար այդպիս ի՞ չեղուած լուրը հրատարակուած է. այսչափ միայն իմացանք, իբր թէ՝ Նոր—Նախիջևանէն ստացած նամակներէն քաղած է. անոր համար իսկոյն պարտաւորուեցանք տեղւոյս քաղաքական իշխանութեանն ալ յայտնել որ գտնէ ով է գրողը նամակին. բայց դատաստանը չ'կարողացաւ գտնել. կրևայ որ գրող ալ եղած չէ, այլ հրատարակողը ինքնին կամենալով մեր քաղաքի Հոգևորականաց կամ նոցա Հոգևոր Իշխանութեան անունը արատաւորել և յատկապէս մեզի վնաս մի ցանկանալով՝ հրատարակեր է. յայտնի է որ բարեկամի բան չէ այդպիսի գործը. "Զի այր թշնամի արար զայն"։ Ինչ և իցէ, այդ կ'թողուք Աստուծոյ դատաստանին. միայն այսչափ կ'յայտնեմք ճշմարտիւ, որ մեր Նախիջևանի Հայոց Եկեղեցեաց մէջ թէ 'ի ժամ սուրբ Պատարագին և թէ 'ի ժամ մաղթանքի կամ գոհացողական աղօթից, երբէք Թագաւոր Կայսեր և տոհմականաց անունքն Ռուսերէն լեզուաւ չ'յիշատակուիր՝ և չեմք ալ ամենևին յիշատակած. վասն զի Նախիջևանի մէջ լսողն ալ չ'կայ և կարդացողն ալ. ուստի հրատարակողը կմնայ ամօթի տակ, որովհետև ընդդէմ խղճմտանքի է այդ ըրած գործը՝ որ հրատարակեր է. մենք սուրբ Պատարագի և թէ այլ աղօթից և քարոզից մէջ կ'յիշեմք թէպէտ Թագաւորի և նորա գերդաստանի անունները, սակայն՝ այն բառերով և այն խօսքերով, որպէս որ տպուած է մեզ ձեռն և ստացած եմք 'ի Սինոդէն սրբոյ Էջմիածնի 'ի ձեռն Վիճակային իշխանութեան. և անկէց դուրս ոչ մէկ բառ կամ խօսք մի ալ չեմք աւելցներ, և չեմք պակսեցներ, և չեմք ալ կարող մեզնէ բան մի յօրինել. նաև սուրբ եկեղեցւոյ մէջ մեր բոլոր ժամասացութիւնը և աղօթքը և ընթերցուածքը մաքուր ու պարզ Հայերէն լեզուաւ է, և զեկավար ունիմք մեզ մեր Տնեցւոյց գիրքը Հայաստանեայց Եկեղեցւոյ տպեալն 'ի Ս. Էջմիածին. եթէ կ'կամենայ Լրագիր հրատարակողը՝ թող ինքն կամ անոր մտերիմն գայ ու ականատես ըլլայ. հրատարակողի յօդուածոյն մէջը ամենևին ճշմարտութիւն մի չերևնար, զի նամակ գրողի անունն ալ չ'յիշեր. ուրեմն մտածող—յօրինողն ալ ինքն է, տպողն և վկայողն ալ ինքն է՝ որ բոլորովին անընդունելի է. Առաքեալն Պօղոս գրէ առ Դաղատա. Գլ. 13. համար 1. թէ "Ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան"։ Աւաղ և ափսոս մեզ և մեր Ազգին. որովհետև մեր ազգէն շատերը՝ ով որ քիչ մը կարդալ ու գրել կիմանայ՝ և մանաւանդ նորերը և լրագիր հրատարակողները, ուրիշ բանի ետեւէ չեն լինիր, և իրենց բոլոր ջանքն ու աշխատանքը գործ կ'դնեն նախ և առաջ սուրբ եկեղեցին՝ և անոր սուրբ ծէսը՝ Պատարագը՝ և Հոգևորական դասքը բերան առնել հանդերձ անոնց գլխաւոր Հովուապետներովը, և կաշխատին անպատուել և արատաւորել, ամենևին վերջն չ'մտածելով և օրինակ չեն առներ լուսաւորեալ Եւրոպացի ազգերէն, որոնք որ ամենևին իրենց եկեղեցւոյ ու եկեղեցականաց վրայ նախատինք չեն դներ երբէք. և այդ իսկ է բուն պատճառը, որ մեր Հայոց ազգը ընտրեալ ուսումնական և կրթեալ Հոգևորականներ շատ չունի, և չի ալ ունենար՝ եթէ այդ յուսոյը մնայ. և գտնուածներն ալ յուսահատուած ու փոշիման եղած են այդպիսի անհիմն վիշտեր քաշե-

լով Թիֆլիզու Հայք առած մի ունին հին ու պա-
պենական խօսքերէն մնացած՝ որ կասեն. Թ-ր-ք-ը
Թ-ր-ք-ին հաւոդ ա, Հայը Հայուն խաւոդ ա։
Հրատարակողը սուտ չէ հանած այս առածի իմաստը, որովհետև կաշխատի իրեն Հոգևորականաց հարց և եղբարցը համար խաւոդութիւնը ձեռք առնել՝ չամաչելով 'ի մարդկանէ՝ և չերկնչելով յԱստուծոյ. այդպիսի սուտ ու մուտ խօսքերով կՁանայ այդպանել իրեն եկեղեցին և անոր պաշտօնեաները. մեծ հեռաւորութիւն կայ երկուց Ցէբութեանց մէջ, Ռուսիոյ և Օսմանեան, ինչ զարմանք բան է որ Ռուսաստանի մէջի չեղուած լուրը Պոլիս եղածի պէս կ'հրատարակվի. այդ ոչ այլ ինչ է. եթէ ոչ անզգամութիւն։ Իմաստնոյն Սողոմոնի խրատին նայելով՝ որ կասէ, "Մի՛ տար անզգամին պատասխանի ըստ նորա անզգամութեան . . . այլ տուր պատասխանի, զի մի՛ երևեսցի իմաստնագոյն յանձն իւր". թէպէտ և չէր արժան մեզ այս պատասխանին գրել, բայց անոր համար գրեցինք համառօտապէս ալ ըլլայ նէ՝ որ մեր սիրելի ընթերցողները հաւատ չի ընծայեն այդպիսի ստութեանը, և գուցէ նոյն իսկ լրագիր հրատարակողը թէ նոյն օրագրաց մէջ և թէ այլ լրագրաց գուցէ այլ ևս այդպիսի հայհոյութիւններ գրած ունենայ, անոնց ևս չ'հաւատան. այսչափ մեզ պարտք էր գրել ու յայտնել. յայտնի է որ ճշմարիտ ու լաւ մարդը ճշմարիտ ու ուղիղ բաներու ետևէ կը հետևի և ոչ հայհոյութեան. այլ այսպիսի բաներ գրել բարի մարդոյ գործ չէ. զի սուրբ Աւետարանն կասէ. "Մարդ բարի 'ի բարի գանձուց սրտի բղխէ զբարի. և մարդ չար՝ բղխէ զչար"։

Վերջապէս խոնարհարար կխնդրեմ . . . . Խմբագրողէդ այս համառօտ նամակս նոյնութեամբ և իսկութեամբ տպագրել ու հրատարակել Արարատի միջոցաւ. և ցաւելով կ'հրաւիրեմ պատուական յօրինողին և կխնդրեմ նոյնպէս՝ եթէ արդարև ունի նա ստացած Ռուսաստանէն որպիսի և իցէ նամակ այս բանի վրայով թէ հոգևորականներէն և թէ աշխարհականներէն մեր քաղաքի եկեղեցեաց վերաբերեալ, թող բարեհաճի առաջարկել 'ի Հոգևոր Առեան Հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի 'ի տնօրէնութիւն. ուր տեղ կըլլայ արդար դատաստանը այդպիսի գործոց։ Իսկ եթէ չունի ձեռքին փաստ մի, ապա թող առաջի Աստուծոյ և առաջի մարդկան պատասխանատու ըլլայ իւր ստութեանցը՝ որ արգելուած է Աստուծոյ տասն պատուիրանաց մէջ 8ՐԴ· յօդուածովը։

Եղիա Ա-ապ Վրահանայ Շ-ԱԲՇԻԷԵԱՆՑ։
է 25· ԵԳՈՒԵՄԲԵՐԻ 1870 Ամ
է ՆՈՐ—ՆԻԿՈԼԱՅ
ՏՇ ՖԵՏՈՎ։

ԳԵՐ. ԱԲԵԼ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ։

Հրամանաւ Վեհ. Կաթողիկոսի՝ Գեր. Աբել Արք Եպիսկոպոս Մխիթարեանց Մողնոյ Ս. Գէորգ Վանուց Վանահայր կարգեցաւ՝ միանգամայն հրահանգ ընդունելով ջանալ անդ Վանական դպրոց հաստատելոյ։

Ի սրտէ յաջողութիւն և կարողութիւն բարեմաղթելով նմին, կը յուսամք՝ զի իւր ուսումնասիրութեամբ և նպաստիւք մերազնեից՝ սուղ միջոցի մէջ կը կարողանայ հաստատել անդ Վանական դպրոց և ժողովել մերազնեայ մանկունքը ուսմամբք լուսաւորելոյ համար։

Պ. ԳԵՈՐԳ ԳԱԶԱՐԵԱՆ։

Մողնոյ Գեր. Վանահայրը կը ծանուցանէ մեզ, զի Մեծարգոյ Պ. Գէորգ Գազարեան Երևանցի՝ Վանական դպրոցի համար կառուցանելիք սենեկաց և այլոց շինութեանց 'ի նպաստ հարիւր ռուբլի նուիրած է։

Կը գովեմք նոյն բարեպաշտ անձի առաքինական իղձը, և հրապարակաւ կը յայտնեմք զմեր շնորհակալութիւն։



Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։